

4515-4526

281.69  
S-16



Կ Ե Ա Ն Ք  
Հ Ա Յ Պ Ա Ն Դ Ի Խ Տ Ա Ց

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Լ

Պ Ի Մ Ա Ր Տ Ե Ր Ո Ս Կ. Ի Ա Ձ Մ Ե Ր Ե Ա Ն Ե

Ս Ե Բ Ա Ս Տ Ա Ց Ի Ո Ց



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՄՐՈՒԷԼ Գ. ՊԱՐՏԵԶՊԱՆՆԱՆ ԵՒ ԸՆԴԵՐ

Ի Բ 7 6



С. С. М. М.  
С. С. М. М. С. С. М. М.

С. С. М. М.  
С. С. М. М. С. С. М. М.  
С. С. М. М.



17507-8

9(47-925)Կ Ե Ա Ն Ք

# Հ Ա Յ Պ Ա Ն Դ Ի Խ Տ Ա Ց



ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՄԱՐՏԻՐՈՍ Կ. ԽԱԶՄԵՐԵԱՆԷ

ՍԵՒԱՍՏԱՑԻՈՑ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՒԼԻ Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

X876






Պանդխտութեան անունն ինքնին իսկ յայտնի է համայն զգայուն այն անձանց սրտերուն, որոց պատահած է. սակայն իմ կարծեաց համաձայն փափաքեցայ փոքր ի շատէ նկարագրել զայն:

Սոյն դոյզն երկասիրութիւնն որ նժդեհի մը կեանքը կը նկարագրէ՝ թէեւ տկար գրչէ մը յառաջ եկած է, այլ մշտավառ սրտի մը զգացումն է:

Ճոխք ազնուութեամբ եւ վսեմութեամբ ամենէն կը յարգուին, իսկ թշուառ պանդուխտք ամենայն բարեկեցութենէ զուրկ. նա աւանիկ երբ ուշ ի կուրծս արկեալ հայրենիք, ընտանիք, զաւակունք եւ բարեկամք եւ նոցին պատկեր իրենց մտաց առաջն կը ներկայացնեն արձանացեալ, կը տազնապին չարաչար:

Այսպէս մեծ է ամենուն, նա աւանիկ վշտացեալ անձանց վրայ այս գրքիս տպաւորութիւնը, որ մինչեւ իսկ լալ կուտայ ընթերցողաց, կը նկարագրէ թշուառ անձանց կացութեան վրայ, որք իրենց հայրենիքներէն հեռացած, օտար երկիրներուն մէջ, կեանքերնին հառաչանօք կանցունեն:

Այո՛ եղկելի պանդխտաց պատմութեան յիշատակը միտքս արթնցնելով, իմովսանն ի գիր արկի զայն, եւ ահա իմ սիրելի Ազգիս կընծայեմ դրաւոր աշխատութեանս այս երախայրիքը:







# Հ Ա Յ Պ Ա Ն Դ Ի Տ Ա Յ

Ողբամ զձեզ, ո՞ որդիք Հայկայ, որք առանց հովուի ցրուած հօտի մը պէս պանդխտութեան մէջ թափառական կը շրջիք և ձեր անգին կեանքը Պօլսոյ և այլօտար երկիրներու, պանդոկներու և սրճարաններու անկիւնները յետին կարօտութեան և թշուառութեան մէջ կանցնէք՝ ամեն միտթարութենէ զուրկ :

Ձեր ընտանեաց և զաւակաց նիւթական պիտոյքները հոգալու առթիւ ձեր ուսերուն վրայ ծանր ծանրը ահագին բեռները կը դնէք . երկարատե պանդխտութեան վերջ մը տալու համար այլևայլ ազդերուն անտանելի վիշտերը կը կրէք, անլսելի շարխօսութեանց գլուխ կը խոնարհէք, և շատ անգամ երկաթուղեաց կայարանները ու փողոցները դատարկ և անգործ կը շրջիք տխրադէմ՝ աւուրն պարէն հայթայթելու :

Ո՛հ, քանի՞ ցաւալի վիճակ, թշուառութեան դէմ գլուխ կը ծռէք, ցաւոց և անտանելի վշտերուն կը դիմանաք, և իսէր ձեր սիրելի զաւակաց և ընտանեաց՝ ամենայն դժոխքմբեր նեղութեանց տուայտանաց՝ մեծաւ համբերութեամբ կը տանիք, յԱստուած ասպաստանելով :

Ո՛հ, Հայաստա՛ն Հայաստա՛ն. մինչև ե՞րբ քու  
թշուառ զաւակները անտանելի վշտերուն մէջ ըն-  
կըղմած պիտի մնան. կը ծնանիս՝ քու մէջ, չես սնու-  
ցաներ քու մէջ. գոյացութեան երկրորդ պատճառ  
կըլլաս, որը կը պահես. կուրախանաս վրան, չես  
գգուեր. զաւակ է կը պարծենաս, ծոցդ չես պա-  
հեր. ծնած եմ կըսես, կաթ չես ջամբեր. կը հսկեմ  
կըսես, գութդ չես շարժեր: Տանդ որմերը խալառ  
քակուած, առիքիդ գերանները փտած, ցուրտե-  
րէն և տօթերէն զաւակներդ հիւանդացած, բոլորու-  
վին ճարերնին հատած և ամեն կողմանէ նեղը մնա-  
ցած, և սաստիկ յուսահատութենէն իրենց մարմին-  
ները, այսինքն ընտանիք և զաւակունք քու աւե-  
րակներուն մէջ թողելով տարաբուն թռչնոց պէս,  
կը հեռանան իրենց ձագուց պարէնն հայթայթելու:

Ո՛հ, ե՞րբ քու փակուած որմերդ նորոգող տէր  
պիտի տեսնենք, որ քու չնայխարհիկ տանդ հիմունք-  
ները դարձեալ վերստին նորոգելով կանգնէ, և իւր  
զաւակունք իր տան ստուար գերաններուն տակ  
պաշտպանէ և խնամօք հսկէ, ինչպէս ամուլ երդեսէր  
մայր մը իւր սիրտը ամենաստեղծ Աստուծոյ կը նուիր-  
է ջերմեռանդութիւններով, ու կըսէ. « հզօրդ և  
անմահ՝ ինձմէ առ այն բոլոր պարգևները, զորս ըն-  
դունեցի քեզմէ, և ի՞նչ որ ինձի համար պատրաս-  
տած ես՝ մի՛ տար, հապա անոր փոխարէն ինձի մէկ  
արու զաւակ մը տուր. անոր ձայնը լսեմ, անիկայ  
տեսնեմ իմ գիրկս առնում, իմ ծոցիս մէջ գգուեմ,  
անիկայ իմ բերնիս համբոյրներովը ծածկեմ, այնու-  
հետև թող մեռնիմ, իմ կեանքս այնուհետև շատ է .  
բայց մա՛յր մեռնիմ »:

Արդարև խիստ ծանր է պանդխտին իւր այն գե-  
ղեցիկ վայրերէն հեռանալ, որ իրեն խանձարուր ե-



ղած է . բիւրաւոր խորհուրդք վշտագին անոր սըր-  
տին մէջ կը յուզուին . լքեալ կը թողու իւր ընտա-  
նիք , որք իւր խնամոց կը կարօտին . կը հրաժարի ի  
պարտուց և ի զբաղմանց՝ որ անոր սրտին քաղցր է .  
կը մեկնի ընկերներէն և սննդակից բարեկամներէն ,  
կերթայ անանկ երկրի մը մէջ կը բնակի , ուր ոչ ոք  
իրեն հաւատարիմ բարեկամ կըլլայ :

Եւ միշտ հառաչանօք կըսէ . « ո՛հ , կը վախնամ  
որ վաղ ընդ փոյթ փափաքիս չհասնիմ . ու ինձի հօն  
նուաղիլ պատահի , ինչպէս մատաղ ձիթենի մը իւր  
բնիկ երկրէն փոխադրուելով իրեն անպատկանաւոր  
օտար երկիր , ուր ցօղը և արևը իրեն օգուտ մը չը-  
նէր . անոր տերևները թառամելով արմատները սը-  
նունդ չառնուր , և իսկոյն անոր վախճան կը հասնի » :

Ահա՛ այսպէս տաքնապեալ խորհուրդներով կուղ-  
ղէ որ և է ինժեքեհուլթեան ծովէ ի ծով և քաղաքէ  
քաղաք ասդանդական թափառելով անմխիթար սըր-  
տով մինչև իրեն բաղդը բացուի՝ իւր աշխատու-  
թեան գործ մը գտնուի :

Ահա այսպէս Հայաստան իւր սիրելի զաւակունք  
իւր աւեր տունէն կը հանէ , ուրիշ օտար երկիրները  
կը զրկէ որպէս զի օտարաց տուները շինուին : Յի-  
րաւի քաջագործով Հայկայ թուռները , ոչ թէ միայն  
օտար երկիրները աղքատաց կամ հասարակ մարդիկ-  
ներուն տուները կը շինեն՝ այլ և հարուստներուն տ-  
պարանքները , մանաւանդ որ մեծն է քան զամե-  
նայն՝ թագաւորներուն հոյակապ պալատները կը  
կառուցանեն ճարտարուեստ իմաստութեամբ ի հիա-  
ցումն տեսողաց :

Ո՛հ ընթերցող , ի՛նչպէս կարողանամ անթաց ա-  
չօք այս յետագայ վշտալի տողերը ի գիր արկանել ,  
թէ թշուառ պանդխտներէն շատերը իրենց սրտե-



րուն բաղձանքները չի կրնալով լեցնել, ոմանք խա-  
րուկի բոցերուն մէջ կը կիզուին, որք ջրհանակրու-  
թեան պաշտօնը կը վարեն. ոմանք փլատակներու  
տակ կը թաղուին որք որմագրութեան արհեստին  
կը ծառայեն. ոմանք ջրամոյն կը կորնչին ինչպէս կը  
պատահին ճանապարհորդաց և նաւարկելոց :

Ահա այսպէս թշուառութիւններով շատերը զուր  
տեղ իրենց ընտանեաց և զաւակաց պիտոյքները հո-  
գալու համար պանդխտութեան մէջ իրենց անդին  
կեանքերնին կը կնքեն :

Այն անակնունելի արկածներէն մէն մի առթիւ կե-  
նազրաւ եղած անձանց որդիք և ընտանիք և բարե-  
կամք, երբ իրենց սիրելոյն աղէտալի մահուան լու-  
րը կառնուն, խի գումարելով՝ սուգ զգեցած առ  
հասարակ դառնապէս ողբերգութիւններով կսկսին  
գետօրէն արտօսներ թափել աշուքներէն և սրտա-  
շարժ երգերը երգել այսպէս :

« Ո՛ր անզուգականդ մեր, այսուհետև ալ բոլո-  
րովին քեզի չ'պիտի տեսնեմք, ա՛լ քու այն շրթունք-  
ներդ մեզի սէր չ'պիտի յայտնեն, ալ քու աշուք-  
ներդ չ'պիտի բանան գորովանօք մեր վրայ նայելու » :

« Այն ամէն քաջալերելու և մխիթարելու նը-  
պաստները, զորս երկինք մարդկան կը շնորհեն, զա-  
նոնք բոլորն ալ մեզմէ վերցուցեր. այս աշխարհս  
այսուհետև մեզի համար ունայն է, որովհետև մեր  
սիրելին անոր մէջ չ'գտնուիր » :

Պանդուխտ անձանց վիճակը երեքի բաժնելով կը  
նկարագրեմ. պանդուխտ բաղդաւոր, պանդուխտ  
թշուառ, պանդուխտ անհոգ իւր հայրենեաց, որոց  
վրայ կարգաւ պիտի խօսիմ :

## Գ Լ ՈՒ Խ Ա .

### Պ Ա Ն Դ ՈՒ Խ Տ Բ Ա Ղ Դ Ա Ի Ո Ր

Մանուշակն ձանձրախարիթ գունով փոքրիկ ծաղիկ մնէ , մացառներու մէջ ծածկուիլ կսիրէ , այլ անուշահոտ բուրու մն փութով զանիկայ կը յայտնէ . սոյնպէս առաքինի բաղդաւոր պանդուխտը իւր հայրենիքէն մեկնած օրէն ի վեր , ուրիշ բան մը չի հոգար , այլ միմիայն իւր սիրասուն զաւակունք և ընտանիք և հայրենիքը , որոնց սիրուն համար կ'հրաժարի իւր բոլոր ազգականներէն և բարեկամներէն , ցաւած սրտով իւր հայրենիքէն կը հեռանայ . օտար երկիր կը գիմէ իւր սրտի բաղձանքները և կարօտութիւնը լեցընելու համար . այն է իւր ընտանիք և զաւակունք թշուառութենէ ազատելու և երջանիկ պահելու համար :

Եւ ուր ուրեք որ բաղդ յաջողի , ամենախոնարհութեամբ կը ծառայէ այլ և այլ ազգաց գործերուն մէջ իւր պաշտօնը անթերի կատարելով . թէպէտև շատ անգամ անոնցմէ կշտամբողական նախատանաց և անարգաբար խօսքերը լսելով , չ'լրածի մը պէս տուկալով կ'հանդուրժէ այն սաստիկ երաշխէպնները իւր սրտին մէջ կրելով :

Քանզի հայրենեաց և ընտանեաց արծարծուն սէրը զինքը ի ներքուստ կը քաջալերէ , ըսելով . « ո՞վ դու , Աստուած քեզի ձեռքէ չի ձգեր » : Ահա այսպէս վստահ կընէ իւր անձը թէ՛ համբերելով համբերէ քեզի անպատիւ ընող անձանց անհամբերելի խօսքերուն , քանզի օր մը գեղեցկանուն բաղդդ քեզի պիտի ազատէ անոնց ձեռքէն . ի՞նչ , Աստուած կազատէ իւր սիրելիք ամբարշտաց ձեռքերէն :



Արդարև հողագնդիս վրայ գտնուած բոլոր կանանցածինք պանդուխտք և նժդեհէն յայսմ աշխարհիս . ուստի մեր նկարագրած պանդուխտ այս աշխարհիս վրայ այն մարդիկ են , որք թէպէտև ամէն կողմէն նեղուած պանդխտութեան մէջ՝ կը տառապին , այլ ամէն կողմէն առաքինի կը մնան , բարի սրբութեան վարուք , հաստատ հաւատով հիմնացեալ սիրով , վերջապէս ամէն կողմէն Աստուահաճոյ վարքով և առաքինութեամբ լցուած , մինչև տեսողաց գործին ու գութը իրենց կը գրաւեն :

Կը տեսնե՞ս շարականին երգիչն , ի՞նչպէս կըսէ ճշմարիտ Աստուծոյ բարի գործքին համար , ( Գործքի օրհնէն նա առաւել քորչբացոցանեն զնա յաւերտն ) :

Ահա՛ այսպէս ալ ճշմարիտ առաքինասէր անձինքը ըստ ժամանակին իրենց գործոցը համաձայն Աստուծոյ սքանչելի խորհուրդներէն կը պսակուին . նա մանաւանդ ամէն կողմէն օժանդակելով բարեբաւտիկ կըլլան , այն ամէն գործոց մէջ , որոց կը ձեռնարկեն :

Աստուած առաքինի անձը կը սիրէ և իւր գործոց համաձայն նորին վարձքը կ'հատուցանէ , և միշտ բարի յաջողութեան մէջ կը պահէ պաշտպանելով : Երբոր Աստուած իւր սիրելի առաքինոյն հետ ըլլայ , այն ժամանակ ամէն մարդ զայն կ'սիրէ , և երբ նա ամէն մարդերէն սիրուինէ , Աստուած ալ վաղ ընդփոյթ նա լիապէս կը վարձատրէ , թէ աստ և թէ ի հանդերձելումն . աստ անոնց սրտերը անոր վրայ կը քաղցրացընէ , և այնուհետև կ'սկսին այլք արգահատիլ անոր վրայ և անոր անսխալ խօսքերուն , և նա այնուհետև չափէն աւելի կ'պատուի և կ'գովաբանի մարդիկներէն . մանաւանդ ճոխանալով ընչիւք կը հարստանայ և օրքան զօր ի լաւ անդր կը թևակոխէ :



Այն որ տգիտութեամբ իւր հայրենիքէն մեկնած էր, քիչ ժամանակի մէջ մեծաւ ուրախութեամբ իւր հայրենիքը կ'վերադառնայ՝ իւր սրտին փափաքը լցուցանելով. այնուհետև իւր բոլոր կենաց օրերուն մէջ հանդերձ ընտանեօք և զաւակօք երջանիկ կեանք կանցընէ :



## ԳԼՈՒԽ Բ.

### ԹՇՈՒԱՌ ՊԱՆԴԻՏԱՅ ՎԻՃԱԿԸ

Թշուառ պանդխտաց վիճակը երեքի բաժնելով կ'նկարագրեմ :

Ա. վարդերուն բիւրաւոր բուրմուռները վայրիկ մը ախորժ կընծայեն, այլ անոնց փշերէն մէկուն խայթուածը երկարատև վիշտեր կ'բերէ : Մեծատան համար բերկրանքները ծաղիկներու մէջ վշտոտ փուշմըն են . իսկ թշուառ աղքատին համար փշերուն մէջի ծաղիկը՝ վշտերուն մէջ բերկրութիւն մըն է, որովհետև բնութեան մէջ ամենայն ինչ զուգակշիռ անօրինուած է :

Տգիտութիւնը, դատարկաբանութիւնը, ծուլութիւնը և քունը ամէն թշուառութեանց մայրն է . ինչպէս իմաստուն Սիրաքն ալ կ'սէ. « մի՛ սիրեր ըզծուլութիւն և զքուն, այսինքն՝ զմայր ամենայն թշուառութեանց » :

Որովհետև թշուառ պանդուխտ անձանց վրայ կը խօսիմք, ուրեմն զրոյցնիս անոնց վրայ ուղղեմք . պանդուխտներէն շատերը որոնք որ թշուառ կըլլան, վերոյիշեալ ախտերէն անշուշտ բռնուած են, ինչպէս Սիրաք կ'ըսէ. « ի կարօտութիւն ամենայն վատ .

այսինքն տգէտն , ծոյն , քնտն և դատարկաբանն , զի ոչ յօժարին ձեռք նորա գործել ինչ » . Սաղմոս երգողն ալ կ'ըսէ . « և որք ննջեցին , ինչ ոչ գտին » : Ահա այսպիսի թշուառները հանրածանօթ են ամե- նուն :

Բ. Թշուառ պանդուխտներէն ոմանք՝ թէպէտև բազդին յաջողութեամբ , երբեմն ծառայական պաշ- տօնիւ մեծամեծաց դռները երկար միջոցաւ կեանքերնին կը մաշեն , իրենք զիրենք սնտի յոյսերով խաբելով , իբր այն թէ , այս ականաւոր գերդաստա- նէն հրաժարելով իմ՝ Հայրենիքս վերադառնալու ժա- մանակ՝ աշխատութեանս փոխարէն լիապէս կ'վար- ձատրուիմ , որով փափաքիս կ'հասնիմ ; և մեծաւ փա- ոօք իմ՝ Հայրենիքս կը հանդչիմ :

Ահա այսպիսի սնտի յոյսերով երկար ժամանակ , ճոխ անձանց դուռը սրտի մտօք իրենց վերաբերեալ ծառայական պաշտօնը անխափան կը վարեն . երբե- մքն վիշտերը և երբեմն նախատական և սպառնա- կան խօսքերը կրելով մեծաւ համբերութեամբ կը տօկան՝ վերջին յուսոյն ակնկալելով :

Սակայն մեծատունք՝ այն թշուառ գործունեայ ծառաներուն , եղկելութիւնը , ամօթխածութիւնը և առաքինութեան հետ մեծ համբերութիւնը , և ամէն գործքերուն մէջ արիաբար ծառայութեանը հա-ւատարմութիւննին տեսնելով զուարճացեալ կ'բերկ- րին այն թշուառ ծառաներուն վրայ , և կսկսին այ- նուհետև համոզակեր խօսքերով շողաքորթել զանոնք և մեծամեծ սնտի յոյսեր խոստանալ , իբր այն թէ ես քու սրտիդ բազմանքները կ'լեցընեմ և քեզի այս ինչ փառքերուն կ'հասցընեմ . « սբ համբերեացի ետարանա կեցի » :

Իսկ թշուառ պանդուխտ ծառայն ալ՝ այս համո-



զակեր խօսքերէն ևս քան զևս քաջալերուելով անմտաբար իւր կենաց բարեբաստիկ ժամէ՛րը ի զուր կը մաշեցընէ մեծատանց դռները :

Ժամանակ կանցնի տարիք կ'հոլովին , հայրենեաց ընտանեաց՝ աղգահանաց և բարեկամաց կարօտութիւնը կստիպեն զպանդուխտն՝ որ օտար երկիրները թողու իրեն գիրկը դիմէ :

Պանդուխտ ծառայն ամօթխածութեամբ իւր միտքը մեծատան կ'յայտնէ :

Իսկ անդուծ մեծատունը երբոր ծառային միտքը կ'հասկնայ , այնուհետև կսկսի յանդիմանական խօսքերով կշտամբել , գիտելով իրեն ծառային անմբտութիւնը և ամօթխածութիւնը , որովհետև անդուծ մեծատունք մտքերնուն մէջ դրած են առաջուց , որ առանց վարձուց հատուցման սպառնական խօսքերով իրենց ծառաները մերժեն :

Ծառայք՝ աղերսելով կաղաղակեն իրենց վարձքը  
պահանջելով ,

Մեծատունք սպառնական խօսքերով դանոնք կըշտամբեն :

Ծառայք՝ կուլան իրենց սրտերուն աղէտները մերկանալով ,

Մեծատունք՝ անգթաբար առանց անոնց ձայնը լսելու և վարձքը հատուցանելու , դանոնք իրենց դռներէն կ'մերժեն :

Ծառայք՝ իրենց թշուառութեանը այլոց յայտնելով կ'բողոքեն :

Մեծատունք իրենց հոգին կորսնցնելով կսկսին այնուհետև սուտ բարուրանքներ և զրպարտութիւններ թշուառ ծառաներուն վրայ կուտելով բարդել . ակներև ամենուն ըսելով . «այդ անպիտան ծառայից խօսքերուն չանսայք և մտիկ չընէք , թէ-



պէտեւ այդ անձը այսչափ ժամանակ մեր դուռը կեցած է, բայց ես ատոր ի՞նչ բլլալը չէի գիտեր, հիմա ատոր բոլոր եղելութեանը տեղեակ եմ. այլ իմ ազգասիրութիւնս չ'ներեր որ այդպիսի սինլքոր անձանց անունը վատահամբաւեմ» :

« Ատոր իր մէկ յանցանքը յիշեմ. տանս կահ կարասիքներէն քիչ բան պակաս չէ . . . դիշերները . . . իմ տունս այն ժամանակի մէջ . . . այդ անպիտան չար ծառային ո՞ր մէկ յանցանքը թուեմ» :

Ունկնդիրք՝, եթէ ըսածին պէս այնչափ յանցաւոր էր նա՝ ինչո՞ւ համար այսչափ ժամանակ պահեց իւր քով :

Մեծատունք՝. — « ի՞նչ ըսեմ իմ կնոջս . . . նախատեղծ Ադամին պէս եղայ . ի՞նչպէս նա խաբուեցաւ Եւայէն, ես ալ չար ծառայէն » :

Այն ատեն ծառայք բոլորովին վարձքը ընդունելու ակնկալութեան յոյսը կտրելնէն ետքը, սատակ երկիւղէ պաշարուելով՝ հրաժարեալ կ'մեկնին կերթան հառաչանքներով, իրենց դատը գերադոյն էակին տնօրինութեան կամաց արդար և անաչառ դատաստանին յանձնելով :

Ահա՛ այսպէս պանդխտաց շատերը առանց վարձքը ընդունելու, իրենց ծառայած դռներէն ողբ ի բերան թշուառութեամբ և անարգաբար անոնց երեսէն մերժուելով՝ կ'մեկնին :

Գ. կան՝ այնպիսի թշուառներ՝ ալ՝ որոնք որ ոխերիմ բազդէն ընկճուած, անոքնական՝ տարիներով աստանդական թափառեալ անգործութեամբ կ'չըրջին. դիտես թէ՛ հայրենիքը անոնց երեսէն կ'խուսէ. անոնց կանայք և որդիքը վերստին անոնք տեսնելոյ կ'յուսահատին :

Թշուառ՝ անտէրունչ պանդխտներէն սակաւք ,

բաղդին յաջողութեամբը կրնան իրենց փափաքանաց հասնիլ երբեմն . այլ շատերը դժբաղդ վիճակին մէջ ապրելով՝ իրենց կեանքերնին անփառունակ շէնքերուն տակը մաշեցնելով՝ և ամեն բանի մէջ կարօտ մնացած , որք Ստուած պարգեւեր է մարդկան վայելելու , և յետին թշուառութեամբ իրենց բնութեան հարկը կհատուցանեն երկու կողմէն անմխիթար մնացած , այսինքն , հայրենիք՝ իրենցմէ և իրենք հայրենիքէն :



## ԳԼՈՒԽ Գ.

ԱՆՀՈԳ ՊԱՆԴԹՏՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԱՅ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լուտաս՝ բանջարոյ կամ ծառի մը անունն է , որուն պտուղը ով որ ճաշակէ՝ իւր հայրենիքը կը մոռնայ . ինչպէս բանաստեղծ մատենագրութիւններուն մէջ կը յիշուի . Ողեսեւս և իւր ուղեկիցներ , երբ անոր քաղցրահամ պտուղը ճաշակեցին , ալ չէին ախորժեր իրենց հայրենիքը վերադառնալու . մէկըդ մէկու կըսէին . « ալ պէտք չէ մեզ այս երկրէն մեկնելու . ( որն որ այսպիսի քաղցրահամ ազնիւ պտուղներ կընծայէ ) ու լուտասայ վայելքներէն զրկուիլ » :

Ինչպէս Մովսէս խորենացին ալ իւր աշխարհագրութեան մէջ կը յիշէ . « լինի յԱփրիկէ բանջար ինչ լուտաս անուն , զոր թէ ուտէ ոք զհայրենիս մոռանայ » :

Անհոգ պանդուխտներն ալ կարծես թէ Ողեսեւսին և իւր ուղեկցաց նման լուտաս քաղցրահամ պտուղ



ճաշակած են . որուն քաղցրութեանն զմայլեալ գըլխովին իրեն . սիրոյ ցանկալի մանդական վայրերը , բնտանիք , ազգականք և բարեկամք մոռցած ծովէ ի ծով քաղաքէ քաղաք՝ թափառեալ աստանդական կը շրջին և մանաւանդ՝ երբ իրենց բաղդը յաջողի պանդխտութեան մէջ վեր ի վերոյ պաշտօնի մը տիրանան , իրենց բոլոր աւուրց անգին կեանքը նոյն պանդխտութեան մէջ կը մաշեցնեն . անհող և անըզգայ ամեն բանէն :

Ուղղութիւնը՝ մարդուս վրայ առաքինութիւն մ'է . բայց առաքինութեան աւելի համբերութեամբ կատարելութիւնը՝ Աստուծոյ՝ վրայ է , որն որ Աստուածութիւն կըսուի . թերութիւն մը և մոլութիւն մը մարդուս վրայ . իսկ՝ անբաններուն վրայ շատ գէշ որակութիւն մ'է . անոնք ամեն բանին անընդունակ ըլլալուն համար , անբանութիւն կըսուի :

Ձոր օրինակ . այն ամեն բանը որն որ մէջէն կը խոտորի , ծայրը կը դիմէ ու անկէ անունը կառնու . սոյնպէս այն առաքինութիւնը՝ մարդկային ողորդական առաքինութենէն անցնելէն աւելի՝ կերևի գազանին բաժանորդ ըլլալու . բայց մարդկային ոչ առաքինութեանն և ոչ մոլորութեանն հնարէ մէկ վայրկեան մը այս ծայրը անցնել :

Որովհետեւ՝ ոչ ոք կրնայ յանկարծակի չար՝ կամ բարի ըլլալ , և ոչ ոք յեղակարծ բարիէն աւելի բարի ըլլալ . կամ չարէն աւելի չար՝ կամ ի չարէն ևս չարագոյն . որովհետեւ անհնար է անընդ մէջ ծայրէ ի ծայր անցնիլ :

Երեք են մէջք , որոց հետ առաքինութիւն հասնի ի դիւցազնականութիւն կամ ի գազանաբարութիւն :

Առաջին բարիքն կասկածելի է թէոր աւելի զօրաւոր ըլլայ , ծննդական վիճակը , մանդեան սովո-



րոյթ . այլ ճիշտ այն երկուքն ալ բուռն զօրութիւն  
ունին, սիրտը մեծամեծ մոլութիւններու մէջ յագե-  
ցընելու և կամ մեծամեծ առաքինութիւններուն մէջ :

Առաքինութենէն խոտորողը , մոլութեան շա-  
ղէն կ'ընթանայ և անզգայ կ'համարուի . նա չանսար  
ուժք « անհոգ պանդուխտք » նոցին ընտանիք և  
զաւակունք անոնցմէ կարօտ կ'մնան , բայց իրենք  
երբէ՛ք զանոնք չեն ուշաբերեր անգամ :

Եթէ սրտի մտօք բարեկամաց մէկը ո՛ր և իցէ կեր-  
պովմը քաղցրութեամբ ըսէ՝ անհոգ պանդուխտ-  
ներուն , ձեր հայրենիքներնէդ մեկնելնիդ քանի՞ տա-  
րի ըլլալը կ'իշէ՞ք . . . : Ձայրանալով կ'պատասխա-  
նեն , « ո՞ր կացոյց գրեզ դատաւոր և իշխան ի վերայ  
մեր , ա՛յր դու . . . » :

Ահա՛ այսպիսի սրտակոտոր խօսքերը ըսելով խո-  
ժու ինա ակնարկելով բարկութեամբ լցուած ան-  
կէ կ'մեկնին քրթմնջելով :


Արդեօք այսպիսի անհոգ պանդխտաց վիճակաց  
վրայ ցաւիմք թէ ուրախանամք , կ'հարցընեմք , ո՞  
սիրելի ունկնդիրք և ընթերցողք , որովհետև անոնց  
միտքը անուսք են և բաղձանքնին ըմբօտ :

Մարդիկ կ'կարողանան ամեհի երիվարները ի-  
րենց կամաց հնազանդեցնելու . բայց յամառեալ  
անհոգ պանդուխտներն չեն կարողանար ուսուցա-  
նել իրենց անձանց տիրելու :

Առաքինիք կ'արգահատին անոնց վիճակաց վրայ  
և կամին զանոնք ի լաւ անդք թեւակոխել տալու .  
բայց անհոգ պանդուխտք իրենց բաղձածամանակեայ  
մոլութեանց սովորութենէն չեն կարողանար խորշելու :

Որովհետև բաղձածամանակեայ սովորութիւնը՝  
բնութեան զօրութիւնը կանուլ , բնութիւնը այլոց  
մայր ըլլալով ասոր տիղմը եղաւ . բարի գործերուն

85-70571



մէջ անոր երախտաւորուած չըլլալուն համար, անիկայ ամէն բարեաց ընդունարան ըլլալով, բայց ճշմարիտ բարւոյն չէ :

Պանդուխտն ախտակցութեան արժանի, բայց ներողութեան չէ. որովհետեւ բնութիւն կարողացաւ անոր փափաքները յօժարեցնելու, այլ կամք չը բռնադատելու, որն որ անիկայ կարող է ժիր տշխատութեամբ յամառ բնութեան վրայ բռնանալու :

Քանի որ՝ իրաւացի բողոքներով կարելի էր պանդուխտին բնութեան մեղադիր ըլլալու. և բնութեան՝ մեղադիր ըլլալու պանդուխտին. նմա պարտաւորիլ, և սմա պատժապարտիլ :

Յամառ անհոգ պանդուխտները երբէք բարոյական խրատներուն ունկն չեն դներ. որովհետեւ զգալի հեշտութիւնները իրենց կիրքէն կ'ծնանին. զի կիրքը վայրկենական փափաքանաց բերմունք մ'են, բերման բուռն դադարածին պէս բերկրութիւնն ալ կ'դադարի : Անոր համար եռանդաշարժ փափաքը վաղ ընդ փոյթ ատելի կըլլայ :

Անհոգ պանդուխտներուն նկարագրութիւնը իմ փանաքիմաց մտացս կարողութենէն վեր ըլլալով. ֆառաքական ժողովոյ և մանաւանդ Սմենապատիւ Ս. Պատրիարք Հօր կ'թողում քննադատել :

Թէպէտև Ս. Պատրիարք Հայրը երբեմն հայրական խնամօք և համոզակեր խօսքերով Ս. Եկեղեցեաց մէջ ծանուցմամբ յորդորեց զանոնք և երբեմն սաստիւ սպառնացաւ անոնց ըսելով. « առանց զանցառութեան և պատճառ մը ունելոյ երկար ժամանակէ ի վեր հոս գտնուող պանդուխտ անձինք անպատճառ իրենց հայրենիքը պիտի երթան՝ իրենց թշուառ ընտանիքը մխիթարելու » :

Այլ ի զուր : որովհետև անհոգ պանդուխտները



իրենց ականջնին խցած . կարծես թէ , կապար հալեցուցած՝ իրենց լսելեաց մէջ թափած են . և մանաւանդ իրենց մոլար շաւղէն երբէք չեն խոտորիր :

Պանդուխտ անհոգ՝ ծոյլ և դատարկաբոյժ ըսել է . որովհետեւ ծուլութիւն և դատարկաբանութիւն իրենց կենաց բոլոր վայրկեանները գրաւած են . և նա աւանդի իրենց անհոգութենէն պաշարուած ժամանակ չունին իրենց կարևոր գործոց վերաբերեալ բաներուն վրայ խօսկալու և խորհելու . եթէ երբեմն երբեմն զգան իրենց անհոգութեան դառնութիւնը դարձեալ անզգայութեամբ և ծուլութեամբ զանց կընեն :

Հայաստան մերազնեայ բնակչաց մէջ վաղեմի անկաշկանդելի սովորութիւն մը կայ , որ ծնողք իրենց զաւակունք վաղ բնդ փոյթ կամուսնացնեն . որոնք որ դրեթէ դեռ զարթած չեն , և լծակից ու տուն շահելու և մանաւանդ մինչև իսկ իրենք զիրենք կառավարելու կարողութիւնը չունին :

Անոնք իրենց հայրերուն վաստակօք երկար ժամանակ կշահուին . այլ երբ իրենց հարք մեռնին՝ իրենք առանց վաստակի կմնան . նա մանաւանդ իրենք ալ վայրենաբար մեծնալով , ալ այնուհետև չեն ախորժիր բնաւ երբէք գործի մը ձեռք զարնելու . կսկսին այնուհետև իրենց հայրենեաց մնացած ժառանգութիւնները վատնելու մինչև բոլորովին սպառի և ինքեանք յետին չքաւորութեան և թշուառութեան մէջ ընկղմել . և յուսահատութեամբ թողուլ իրենց ցանկալի հայրենիքը և դիմել ի պանդխտութիւն , դերի լինել այլոց և ամեն բանի մէջ կարօտ :

Թշուառ անձինք . որովհետև իրենց բոլոր ունեցած կեանքը ծուլութեամբ և անհոգութեամբ մաշեցուցած են . ալ ուր որ երթան ոչ իրենց անձանց և ոչ իրենց ընտանեաց օգուտ մը ունին :

Ահա՛ այսպիսի իրենք զիրենք չճանչցող անձանց անուները՝ պանդուխտք անհոգք անուանեցինք . իրենց անունը՝ իրենց գործերէն առնելով :

Ամուսնական իրաւունք՝ շատ դժուարին է սահմանել . կերեւի թէ՛ այն Աստուածային իրաւունքէն չեն . ոչ քաղաքականէն և ոչ ազգաց իրաւունքէն . չերևնայ

Աստուծմէ ըլլալ , ապա թէ՛ ոչ ամեն մարդ կպարտաւորէր կինը առնելու և այնչափ սպանութեանց մեղապարտ կըլլար . որն որ ամուսնական անհոգութենէն այնչափ զաւակունքը Աստուծոյ և աշխարհին չընծայեր :

Կուսական վիճակն՝ ամուսնական վիճակէն այնչափ Աստուծոյ աւելի հաճոյ է , որչափ առաւել նման է Աստուածեղէն բնութեան՝ հոգին քան զմարմին :

Ազգին ծանր ծանր բեռներ որո՞նք են . եթէ ոչ անհոգ պանդուխտք և իրենցմէ ծնած զաւակունք :

Գերագոյն էակէն՝ և նորին անհուն ողորմութենէն խնդրեմք , որպէս զի իւր ամենակարող աջը հովանի և պահապան ընէ մեր ցրուեալ բոլոր ազգին վրայ , և մանաւանդ այն թշուառ անհոգ պանդուխտ սիրելի եղբայրներուն . որով կարողանան և զօրանան իրենց ապագայ վիճակը մտքերնին բերել , և իրենց անհոգութեան պարագաները մէկ կողմ՝ թողելով , ժիր մշակ ըլլան առաջի Աստուծոյ և մարդկան :

Ո՛ր , սիրելի ընթերցողք . անհոգ պանդուխտներուն մտքերը՝ յոյսերը և նպատակները ուրիշ բանի մը վրայ կաշկանդուած չեն . այլ միմիայն բաղդի բերմանց , ամեն բան բաղդի կթողուն և ամեն բան անկից կսպասեն ուժովնալու և ճոխ մեծատուն ըլլալով մեծնալու վրայ են . զոր երկինք առատ պարգևներով պսակելէն և ըզձերնին լեցնելէն յետոյ իրենց փափաքանաց հասցնէ :

Արդ՝ եթէ դուն արտի մը բոլորաիքը ցանկով



պատես և մէջտեղը որթերուն տասն և հինգ տարի հսկես և դարմանես . արդեօք անոնց արգասեաց ճաշակը կը վայելե՞ս թէ ոչ . այո՛ , դու ինքնին կխոստովանիս թէ անշուշտ կվայելեմ :

Ուրեմն տասն և հինգ տարուան միջոցը վեց Ս. Հարք Պատրիարքարան աթոռ բազմեցան . որոնց երկուքը Տեղապահ և չորեքին իսկ Պատրիարքունք՝ տարիներով , արդեօք՝ անոնք ինչո՞ւ համար սահմանադրութիւնը խաւարէն ի լոյս չհանեցին որ ամեն մարդ տեսնէր և սիրէր գգուելով :

Որովհետև պանդուխտ եղբայրները թովմաս առաքելոյն կարծեաց դաղափարին մօտ ըլլալով , և մինչև բան մը բաց աչօք չտեսնան՝ անոր հաւատք չեն ընծայեր . ա՛հ ե՞րբ մեր սիրելի նոր սահմանադրութիւնը պիտի տեսնանք . ե՞րբ անոր շուքին տակ պիտի պատասպարուիմք և ե՞րբ մեր անձկալոյն շնորհաց առատապէս պարգևները պիտի ըմբոշխնեմք :

Արդեօք անիկայ հիմայ ի՞նչպէս է , ոտքի ելեր կքայլե՞ , եթէ դեռ կաթ կուտէ , արո՞ւ է թէ էգ , ուսմունք առա՞ծ է թէ տակաւին կյաճախէ ի վարժարանս , հասակը երկա՞ր է եթէ կարճ : Ըստ որում տասն և հինգ տարուան այգին տնկող մարդը՝ իւր այգւոյն արգասիքը վայելեց . այլ մենք դժբաղդաբար տակաւին մեր սահմանադրութեան երեսը անգամ չենք տեսած . կարելի է մեռած է մեզի չեն ըսեր . ա՛հ , ո՞ւսկից ասոր վրայ ճշդիւ լուր մը առնէինք , որ միամիտ ըլլայինք :

Տասն և հինգ տարուան միջոցին մէջ , միմիայն երկու նորահնար բաները ազգերնուս մէջ մտած կը տեսնեմք . որոնց արդի երիտասարդութիւնը՝ Սահմանադրութեան ժառանգներն են կսեն . առաջին՝ քուէարկութեամբ պատրիարք մը ընտրել . երկրորդ՝

Թողերուն մէջ Թաղականք ընտրել. այս երկուքէն զատ եթէ ուրիշ բան մը կայ՝ մեզի պատմեցէք, որ մենք ալ խմանանք :

Ասոր՝ սովորական ընտրութիւն մը կսուի, ինչպէս մեր նախնի հայրերն ալ կընէին առաջուց. միաբանութիւնով՝ իմի հաւաքելով քաղաքացիները՝ քաղաքացիներուն մէջ իրենց գործունեայ և հաւատարիմ մարդիկ կընտրէին ազգին գործերը տեսնելու. նոյնպէս գիւղացիները՝ գիւղացւոց մէջէն. և երբէք՝ կուիւներ և աղմկաց շփոթութիւններ և խռովութիւններ չէին պատահեր. որովհետև ամէն մարդ պարզ և հաւատարիմ և Աստուծմէ երկիւղածք էին :

Այլ՝ այժմ, մեջերնիս կուիւները՝ և խռովութիւնները անպակաս են. մարդիկ անգործունեայ և անհաւատարիմ ըլլալուն համար. ասոնք մի միայն իրենց քսակները լեցնելու կայխատին և բռնութեամբ պատուիլ կուզէն ազգէն. և եթէ իրենց յափշտակութիւնները երևան հանես և գործէ ձգես՝ այն ժամանակ կսկսին զայրանալ՝ ըսելով, «իմ պատիւս կորսնցնել կը ջանաս, այլ ես քու կարծեաց համեմատ մարդ չեմ, ես պատուաւոր եմ և իմ պատիւս քեզմէ կը պահանջեմ» :

Արդի երիտասարդութիւնը կը կարծէ թէ՛ այժմուս լուսաւոր դարը սահմանադրութիւն հնարած է իւր իմաստութեան հանճարով, և որոյ շնորհիւն է, որ ամէն տեղ բարեկարգ վարժարաններ հաստատուեցան, նաև կ'յաւելու թէ՛ առաջի դարու մարդիկները տգէ՛տ և անպիտան էին, իսկ այժմուս սահմանադրութեան շնորհիւ՝ թէ՛ արանց և թէ՛ իզաց սեռը լուսաւորուեցան և լուսաւորուելու վրայ են :

Այո՛ ես ալ կ'խոստովանիմ թէ՛ այժմուս մարդիկ առաջիններէն դիտնական են և հանճարեղ, այլ ոչ թէ՛ արդի սահմանադրութեան շնորհիւն է այս, այլ



ժամանակին բերմամբը՝ այս բոլոր յաջողութիւնք ձեռքը բերաւ :

Թող յիսուն տարիէն առաջ բարբարոսաց ժամանակ՝ այժմուս բերմանց համեմատ վարժարանները շինուեր և բացուեր, և արդի շարունակուած ուսմունքը շարունակուէր . թո՛ղ քառասուն տարիէն առաջ կանանց սեռը, այժմուս ժամանակին բերմանց համեմատ զարդարեալ զգեստներով՝ գլխաբաց իրենց տուներէն մեկնելով փողոցները շուկաները և սրճարանները չըլէին :

Թո՛ղ երեսուն տարի առաջ արու զաւակունք և օրիորդք այժմուս ժամանակիս բերմանց նման հանապազօրդ վարժարանները շարունակէին . և ուզած ժամանակ փողոցները և զբօսավայրները ճէմէին . կըրնայի՞ն արդեօք եթէ ոչ . դու ինքնին կ'վկայես թէ ոչ :

Ապա ուրեմն ժամանակիս բերմանց շնորհիւն է այս ամենայն բարիքը, զոր կ'վայելեմք՝ լիապէս . և ոչ թէ արդի մեռեալ սահմանադրութեան, որոյ անունն կայ և ինքը չ'կայ :

Ամէն գործոց մէջ փորձ կայ, մանաւանդ թուաբանութեան խնդիրներուն մէջ, ուստի մենք ալ ապացոյցով փորձեմք, որ ամեն մարդ ալ զբական կերպով համոզուի :

Թո՛ղ արդի Երիտասարդութիւն յանուն սահմանադրութեան երբէք գործ մը չ'գործէ, և երբէք չ'յիշելով մէկ կողմ ձգէ զանիկայ . տեսնեմք ժամանակիս բերմունքը կ'օժանդակէ՞ թէ կատէ այժմուս սահմանադրութեան տեսած գործը տեսնել, և թէ յիսուն տարիէն առաջ ի՞նչ էր դարձեալ անանկ կըլլայ :

Ասոր հակառակ թող սահմանադրութիւնը ամենազօրութեամբ ջանայ առաջի դարերուն բարբարոսական գործը գործել . տեսնեմք՝ կարո՞ղ է և կրնայ՞

գործել, դու ինքնին կ'ըսես թէ ոչ:

Ապա ուրեմն ժամանակիս բերմանց շնորհիւն է որ այժմուս գարուս լուսաւորուեցաւ և լուսաւորելու վրայ է:

Քննող գաղտնեաց Տէրն կ'ըսէ չի՛ք ինչ ծածուկ, որ ոչ յայտնեսցիս. և ինքն Աստուածապէս հրաշագործութիւնները ըրած ժամանակն ալ՝ բժշկուածներուն կ'պատուիրէր թէ՛ « մի՛ ումեք ասիցէք »:

Ահա՛ այս երկու խօսքերը իրարու հակառակ են. որովհետև գաղտնիք անշուշտ օր մը պիտի յայտնուին, հապա ինչո՞ւ « մի՛ ումեք ասիցէք » կ'ըսէր. իմաստըն յայտնի է. թէ որ ըսէր ես ինչ որ ձեզի ըրի, դուք ալ շուտով մը գացէք այլոց պատմեցէք. անոնք ծուլանալով՝ ումեք չէին ըսեր, անոր համար կ'ըսէր « մի՛ ումեք ասիցէք » կամէր ըսել թէ տեսածնիդ վաղ ընդ փոյթ այլոց պատմեցէք, և իմ երախտիքներս և Աստուածային գործած գործերս ամենուն հաղորդեցէք:

Որովհետև զձեզ ձեր թշնամիին ձեռքէն ազատելու և հանդիստ կեանքը շնորհելու համար, իմանարուեստ աթուէն յերկիր խոնարհեցայ, ահաւասիկ այս Աստուածային հրաշագործութիւնները՝ զոր կը տեսնէք, ձեզի կ'ընեմ:

Սրբազան հարք՝ Ս. Եկեղեցեաց մէջ ազնիւ քաղաքացւոց երբեմն ողոքանօք և երբեմն սաստիւ միշտ կ'քարոզեն և կ'պատուիրեն, որպէս զի առանց զանցառութեան Ս. Եկեղեցին յաճախեն. Աստուածային օրէնքները և պատուիրանքները անթերի պահելով բարի օրինակ ըլլան իրենց ապագայ սերնդոց:

Եւ ո՞րչափ քարոզիչ Ս. հարք ազնիւ քաղաքացւոց պատուէրներ տալով կ'քարոզեն և զանոնք Ս. Եկեղեցին կ'հրաւիրեն, անոնք ալ այնչափ կ'հեռանան բնաւ երբէք անոնց խօսքերը չանսալով:



Անոնք իրենց Ս. Եկեղեցին երթալու օրերը որո-  
րոշած են, երբոր ազգային կամ թաղի մը համար  
Սահմանադրութեան քուէարկութիւն մը ըլլաւի և  
կամ իրենց ծանօթ ընկերներէն ականաւոր ննջեց-  
եալ մը պատահելու ըլլայ, այն ժամանակ՝ ի տես և ի  
ցոյց միմեանց Ս. Եկեղեցին կ'հաւաքուին. ան ալ ա-  
ռանց աղօթից և Աստուածպաշտութեան և Տեառ-  
նագրութեան կ'մեկնին Եկեղեցիէն անխղճմտօրէն :

Ա՛հ երանի՛ թէ քարոզիչ Ս. հարք Քրիստոսի ու-  
սուցած ձևերով՝ ազնիւ քաղաքացւոց քարոզէին. և  
բեմբասացութեան ժամանակ ստէպ ստէպ այս խօս-  
քերը յեղյեղէին, ըսելով. « ո՞վ սիրելի ազնիւ քաղա-  
քացիք. Ս. Եկեղեցին չ'մտնաք, և Ս. Եկեղեցւոյ ա-  
նունք ձեր շինուց մէջ երբեմն երբեմն մտքերնիդ ե-  
կած ժամանակ յիշելու բաւականացէք, ապա թէ  
ոչ, հետեւանքնիդ գէշ է՝ և մեղաց մէջ կընկղմիք : »

Այն ժամանակ, դու՛ ազնիւ քաղաքացւոց, ա-  
րանց և կանանց, ուստերաց և դստերաց խուռն  
բազմութեան Ս. Եկեղեցին յաճախելը և միշտ անպա-  
կաս ըլլալը կ'տեսնես :

Բայց հիմայ, պանդուխտ եղբայրները Ս. Եկեղե-  
ցին կ'յաճախեն. որովհետև պանդուխտ եղբարք ի  
նախնեաց անտի սովորութիւն ունին ամենայն սիրով  
Աստուծոյ և մարդկան ծառայել. և իրենցմէ մեծերուն  
պատուէրները և հրամանները անթերի կատարել :

Պանդուխտ եղբայրներ՝ ինչպէս այս անցաւոր և  
ուռնայն աշխարհիս մէջ միշտ կամակատար են և ծա-  
ռայ, նոյնպէս հանդերձեալ աշխարհն ալ ազնիւ քա-  
ղաքացւոց ծառայ պիտի ըլլան. որովհետև ազնիւ  
քաղաքացիք ո՛ւր երթալու ըլլան, առանց ծառա-  
յից չեն կրնար կենալ. ո՛չ տիկնայք առանց սպա-  
սուհւոյ՝ և ոչ ա՛րք առանց սպասաւորի :

Ըստ որում՝ ճոխ աղնիւ քաղաքացիք ամօթ կը համարին ասպնջական հիւրի մը ներկայութեան սպաս մատուցանել . իրաւունք ունին , ի հարկէ աղնիւ անձանց քով աղնիւ անձինք կերթեկեն և կը ազմին և կ'խօսին . հանդերձեալ աշխարհը՝ երբոր Սերովբէից՝ Քերովբէից՝ Առաքելոց՝ Մարգարէից և բոլոր ընտրեալ հոգիներուն խումբերը՝ աղնիւ քաղաքացւոց այցելութեան երթալու ըլլան՝ ո՞վ պիտի անոնց ըսպաս մատուցանէ . ո՞չ ապաքէն պանդուխտ ծառայները . ծառայն ուր որ ալ երթալու ըլլայ՝ դարձեալ ծառայ է , ի հարկէ հանդերձեալ աշխարհը աղնիւ քաղաքացիք դարձեալ՝ պանդուխտ ծառայից և սպասաւորաց վրայ պիտի իշխեն :

Եւ իրենց կարծեաց համեմատ պատրանօք այն երանաւէտ հոգիներէն յանուն սահմանադրութեան հրամանը պիտի խնդրեն , որպէս զի քուէարկութեամբ ընտրուած անձինք , երբ ազգային պաշտօնէն հրաժարուին , ա՛լ անոնցմէ բնաւ երբէք հաշիւ չ'պահանջեն :

Ինչպէս՝ ազգասէր և ճշմարտախօս խմբագրի մը քննադատ իմաստէն յօդուած մը այս փոքրիկ պատմութեան շարերուն մէջ մի ըստ միովէ պիտի շարեմ , իմ ըսած խօսքերուս հաստատութեան համար , որպէս զի յաւիտեանս յաւիտենից անմոռանալի մտօք միշտ ի լուր աշխարհիս յիշատակուի :

Ընթերցիր՝

Լրագիր Թերթը . Ա. տարին , Թիւ 58 , շաբաթ , նոյեմբեր 8 , 1875 .

Կա՞յ արդեօք մեր ազգին մէջ ցարդ եղած իրական պատասխանատուութիւն մը հասարակաց գործոց տեսչութեան և տնտեսութեան մասին : Վարչութեան ամենէն բարձր ժողովէն սկսեալ մինչև յետին թաղ խորհուրդն կամ հոգաբարձութիւնը անպա-



տասխանատու ընթացք մը բռնած երթալու վրայ են:

Վարչութիւն մը, անխոհեմ ընթացիւք՝ ազգին վրայ 5-6000 ոսկւոյ պարտուց բեռ մը կ'ձգէ, և հրաժարելուն պէս՝ ամէն պատասխանատուութենէ կազատի:

Պատրիարք մը՝ ազգին 1-2 հազար ոսկին անյադաբար իւր կոկորդը կանցընէ. և հրաժարելով՝ ո՛ր և է պատասխանատուութենէ մը կազատի:

Փրկչի հոգաբարձութիւն մը յիմարութեամբ 8-900 ոսկի անտեղի և ապարդիւն ծախուց պարտք մը կ'բեռցընէ ազգին վրայ, զոր ազգ տուժելու կրստիպուի, բայց ինքը հրաժարական տալուն պէս՝ կազատի. ազգային իրաւունք մը օտարին ծախելու վտանգին ներքեւ կիյնայ, բայց զայդ ընողը կ'հրաժարի պատասխանատուութենէ:

Թաղական խորհուրդ մը կամ հոգաբարձութիւն մը, վատթար մատակարարութեամբ մէկ կամ երկու տարուան մէջ 3-400 ոսկի բաց պարտք մը կը թողու Եկեղեցւոյն կամ դպրոցին վրայ. և հրաժարելուն պէս բոլոր պատասխանատուութենէ կ'մաքրուի:

Այս է՝ մինչև ցարդ մեր ազգին մէջ տեսնուած գործքերու ընթացքը. և պատասխանատուութեան դրութեան գործադրութիւնը. այնպէս որ հասարակաց պաշտօնի վրայ կոչուած մէկը ուզածին չափ թող սխալ գործէ, փնաս հասցնէ ազգին. տո՛ւաւ մի հրաժարականը, ալ այնուհետև աղատ է ամէն պատասխանատուութենէ:

Այս կերպով՝ ազգին վարչական ընթացքը երկու հակառակ չարեաց մատնուած է, կամ այն է որ խաբեբայ և խարդախ անձին քանընտրութեամբ ազգային պաշտօնի կոչելու, ի փնաս ազգին իրենք զիրենք պարարելէն յետոյ, տուգանքը թիկունքը բեռցնելով կ'բաշուին. կամ այն է որ խղճահար և բարեսիրտ ան-

ձինք ազգային գործոց վրայ դրուելով, ասոնք ալ իրենց նախանձութիւնը մէկ կողմ կ'դնեն և գործ մը տեսնելու համար՝ իրենցմէ բարձրագոյնին հրամանին կամ որոշմանը կ'սպասեն, որ գայ իրենց հասնի :

Եւ տարակոյս չ'կայ թէ այսպիսի դրուութեամբ մը, կամ ազգին շահերը շարունակ փնասու պիտի ենթարկեն, կամ ազգին գործերը չ'տեսնելու վիճակի մը դատապարտուած պիտի մնան :

Եւ ասոր ալ միակ և գլխաւոր պատճառն է մեր ազգին վարչութեանը մէջ իրական պատասխանատուութիւն մը չ'կենայն ու չ'գործադրուիլը :

Ո՞ սիրելի ընթերցողք, ընթերցաք՝ լեցելք՝ և իմացաք զրուցած խօսքերուս ճշմարտութիւնը և մանաւանդ ազգասէր խմբագրի մը վաւերական ապացոյցներով հաստատած վկայութիւնը, ալ ես յետ այսորիկ այս նիւթիս վրայ խօսելէն կ'ըւեմ. և մանրախոյզ հետազօտութիւնը ձեր նրբախոհ մտայքննադատութեան կ'յանձնեմ, իսկ ես վերստին պիտի դառնամ իմ կարևոր նիւթիս վրայ ճառել :

Բայց աշխարհ կայ՝ և կ'մնայ, միմիայն՝ մարդիկները կուգան այս ունայն աշխարհէն կանցնին. դաշտերը ու լեռները մշտակայ են, միմիայն բոյսերը կը թառամին :

Ուրեմն ո՞ սիրելի պանդուխտ եղբայրներ, դուք ինձմէ աւելի կարի իսկ քաջ գիտէք, որ դաշտերը ու լեռները միշտ կան, այլ մարդիկները ու բոյսերը վաղանցուկ և առժամանակեայ են՝ և վաղ ընդ փոյթ կանցնին :

Ո՞ սիրելի պանդուխտ եղբարք, Աստուծոյ անհուն ողորմութեան ապաստանելով՝ բաւականանամք մեր վիճակէն. դառնամք մեր սիրուն քաղցր Հայաստան, որուն անունը յիշած ժամանակս, գիտես թէ ջերմեռանդութիւնս ալ կաւելնայ՝ և կը փոխուիմ յայր այլ :



Բոլոր ջանքովս Աստուծոյ կ'իսնդրեմ որպէս զի իւր ամենակարող զօրութեան աջը՝ մեր սիրելի ազգը ամեն չարերէն՝ երեւելի և աներեւոյթ արկածներէն փրկէ և զերծ կեցուցանէ . և մեր սիրելի պանդուխտ եղբայրներն ալ, իրենց սիրուն Հայրենիք՝ քաղցր Հայաստանը առաջնորդէ, որոյ գեղեցիկ վայրերուն անապական և կենդանարար զովացուցիչ օդերը ծծելով զուարճանան բերկրանօք :

## ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա՛հ, Հայաստան Հայաստան, քաղցրիկ սիրուն իմ Հայաստան, երբ կըլլայ որ քու ամբողջ զաւակները ժողովելով քու ծոցիդ մէջ սիրով մը ողջագուրելով գգուես :

Հողագնդիս վրայ դռնուած ո՞ր սահմաններուն նմանցնեմ զքեզ իմ Հայաստան, որովհետեւ դու ի բնէ իսկ աննման՝ գեղեցիկ ես իմ Հայաստան :

Արքունական շքեղ և հոյակապ պալատներէն և աշխարհիս բովանդակ քաղցրագոյն իրերէն ևս առաւել չքնաղ և քաղցրահամ ես՝ իմ սիրուն ցանկալի Հայաստան :

Քու դրիցք գեղեցկութիւնը, օդից մաքրութիւնը, և մշտահոս քաղցրահամ ջուրերուն առատութեան ու լիութեան կողմանէ ևս աւելի քան զբնաւս գերազանց ես իմ Հայաստան :

Ինչպէս հազարաւոր տարիներէն առաջ ասորեստանեայց Նինոս արքային կինը Շամիրամ թագուհին զքեզ տեսնելուն պէս սիրահարելով՝ զմայլեցաւ քու դէմքին՝ քու դրիցք և օդիդ գեղեցկութեանը, անոր համար քու մէջդ ամուր քաղաք մը և բերդ մը

շինել տուաւ Շամիրամակերտ անունով որ վան ալ կըսուի . և մինչև հիմայ այն ատենուան շինած պատերը կեցած են . ահաւասիկ վկայ քու գեղեցկութեանդ իմս Հայաստան :

Չորս տարերք , այսինքն , հող , ջուր , օդ և հուր կպատմեն թէ Հայաստան Եդեմական դրախտն է , և թէ նախաստեղծ մարդն Ադամ իւր կողակցին հետ այն վայրերը ճեմած են . և ստեղծող գերագոյն է՝ ակն՝ Աստուած ամենակալ , իրենց հետ հոն խօսած է կարևոր պատուէրները տալով :

Ո՛ սիրուն Հայաստան՝ ահաւասիկ քեզի Աստուած աճեմ՝ և Աստուածավայր ալ կըսուի . ուրեմն ի՞նչու համար այս չքնաղ վայրէն հեռանալով՝ կղրկուինք անոր վայելքներէն , ինչո՞ւ համար աճապարանօք չենք փութար անոր սիրոյ գիրկը հանգչելու , որ փափաքանօք զմեզ ընդունելու կըսպասէ :

Ո՛ որդիք քաջին Հայկայ պանդուխտ եղբայրներ , ա՛լ բաւական է այս օտար երկիրներուն մէջ թափառական շրջիլ , ստակ հաւաքելու կամ բաղդին յաջողութեամբ փառաց մը տիրանալու . վերագանւամք մեր ցանկալի հայրենիք Հայաստանը , վայելեմք այն քաղցր բերկրանաց զուարճութիւնները , շրջիմք այն գեղեցիկ վայրերը , որով մեր կարօտակէզ սրտերուն բաղձանքները լցուին . մեր թշուառ ընտանիք և զաւակունքը մխիթարեմք , որոնք որ արտասուաթոր աչօք , անհամբերաբար անձկանօք ակնկառոյց զմեզ կըսպասեն . ողջունեմք մեր վաղեմի մտերիմ ազգականները բարեկամները և սննդակից սիրելիները , որոնք որ կարօտ սրտերով զմեզ կդիմաւորեն :

Երթանք մեր դրախտանման այգիները և գեղեցիկ ընդարձակ պարարտ արտերը հերկեմք՝ սերմանեմք և հնձեմք . որ երկար ժամանակէ ի վեր խո-



պանացեալ՝ կորդացեալ, բարձի թողի կման գըլ-  
խովին առանց մշակութեան, որոնց ոսկեգոյն արդա-  
սիքները մեր շտեմարաններուն մէջ զետեղեմք :

Գիտէք դուք կարի իսկ քաջ, ո՛ր որդիք Հայկեան,  
թէ և ժամանակիս բերմունք խոչընդոտ ըլլալով՝ որ-  
չափ յետին թշուառութեանց մէջ զմեզ ձգած են, այլ  
սակայն մեր նախնի Հայկայ վեհազ սիրտը կ'կրեմք,  
որովհետև մեր աղքատիկ և անփառունակ տուները  
ով որ գալու ըլլայ՝ առանց առատ կերակրոյ և յար-  
գանաց չենք թողուր որ երթայ. ահա մենք ի բնէ  
անտի՝ ինչպէս վերը յիշեցինք, առատութեան մէջ  
անած եմք և մեծ քաջ կորովի Հայկին թողներն եմք,  
երբէք խնայութեան մէջ չենք կրնար զմեզ պահելու :

Ահաւասիկ յետին չքաւոր անձը՝ այս վեհազնա-  
կան սիրտը կ'կրէ :

Յետին չքաւոր անձանց տան հաց՝ կերակուր և ըմ-  
պելիքը, օտար երկիրներուն մեծատանց կերակուրնե-  
րէն և ս. քանդևս առատ է. մենք՝ մեզի դիմող երթեւեկ  
բոլոր անձինք առատապէս կ'կերակրեմք. իսկ անոնք  
մուրացկանին որովայնն անգամ չեն յագեցներ :

Ա՛հ սիրելի պանդուխտ եղբարք, ա՛լ բաւական  
է այսուհետև պանդուխտ երկիրներուն մէջ թշուա-  
ռաբար դեգերել, մեր անգին կեանքը ի զուր մա-  
շեցնելով. ա՛լ բաւական է օտար երկիրներուն շի-  
նուց ներքև ասպնջական ըլլանք. ա՛լ բաւական է  
է այլոց երաշխեպները մեր մարմնոյ վրայ. ա՛լ բա-  
ւական է արծաթագին գերի մը պէս՝ այլոց առաջ  
դուրս ծռել. ա՛լ բաւական է այլոց դժոխքմբեր  
խօսքերը լսելու. մենք՝ որ վեհազն քաջին Հայկայ  
ճետերն եմք, չեմք կրնար հանդուրժելու :

Գիտե՛մ ձեր կարծիքը, ո՞ սիրելիք, պիտի ցուցը-  
նէք այգիներուն և արտերուն մէջի վաղեմի արմատա-

ցուցած մեծամեծ սայրասուր փշոտ տունկերը , որոնք որ մեր որդեսէր հայրերը և սիրելի եղբայրները խոցեցին և վիրաւորեցին , որոնցմէ շատերը նոյն խոցեալ վիրաց սաստիկ ցաւերէն իրենց բնութեան հարկը հատուցին :

Անոր համար կ'կասկածիմք և կերկնչիմք հայրենիք վերադառնալու . չըլլայ թէ մենք ալ նոյն թիւնաւոր տունկերուն փուշերէն խայթուիմք և վիրաւորիմք . և մարդասէր բժիշկ մնալ չունիմք որ մեզի սպեղանիներով առողջացունէ :

Ո՛չ , ո՛չ եղբարք սիրելիք . այդպիսի ունայն և ոչինչ կարծիքներնիդ բոլորովին ձեր ուշոյ մտացը հանեցէք , և անկասկած եղէք . այն վաղեմի տունկերը՝ որոնցմէ այդչափ վախցած էք , ճշմարիտ կըսեմ՝ ձեզի , ո՞ եղբարք սիրելիք , անոնց սաղարթախիտ տերեւները բոլորովին թափած են . ոստերը կոտրուած՝ և այն ահագին տունկերը արմատներէն չորցած և արմատախիլ եղած են :

Բաւական ժամանակէ ի վեր սաստիկ հովեր՝ իրարու յաջորդելով , հարին կործանեցին զանոնք , որոց խռիւններն անգամ չեն երևնար :

Ահա՛ ձեզի նոր աւետաւոր լուր մը , ո՞ սիրելի եղբարք . ա՛լ ի՞նչ կըսպասէք , ի՞նչ կ'խորհիք և ինչո՞ւ կեցած էք :

Ահաւասիկ չքնադեղ հայաստան՝ կաթողին գիմօք և խանդակաթ սիրով գիրկը բացած իւր սիրելի հարազատ որդիքը բնդուներու և ողջագուրելու կ'սպասէ :



AMERICAN  
LIBRARY COMPANY  
NEW YORK



1850

1850

ՀՐԱՄԱՆԱԻ  
ՀՍԱՍՐԱԿՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ  
(ՄԷԱՐԻՖ) ԺՈՂՈՎՈՅ





Am



